

Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ

Հարուստ
մարդ,
աղքատ
մարդ



Written by: Edward Hughes
Illustrated by: M. Maillot; Lazarus
Adapted by: M. Maillot; Sarah S.
Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant
funded by: Zareh Seropian & Sons Foundation
special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children
www.M1914.org


BFC
PO Box 3
Winnipeg, MB R3C 2G1
Canada

©2012 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.




Յիսուս գիտեր, թէ տաճարին առաջնորդներէն
շատեր դրամը Աստուծոյ աւելի կը սիրէին:
Ան պատմեց, թէ ինչ եղաւ երկու մարդոց,
եւ ինչու անիմաստ է հարստութիւններ
ունենալ առանց Աստուծոյ:
Հարստութիւնները չեն
կրնար կեանք գնել
առանց Աստուծոյ
երկինքին
մէջ:




Հարուստ մարդ մը
կար, որ գեղեցիկ
հագուստներ ուներ,
որոնք շատ սուղ
էին: Ան թագաւորի
պէս կը հագուէր:




Հարուստ մարդը նաեւ շատ լաւ կ'ուտէր: Ամէն ճաշ
կարծես խրախճանք էր: Այնքան դրամ ունէր, որ
ցանկացածը կրնար գնել ուտելու, իբր նախաճաշ,
ճաշ եւ ընթրիք կամ անոնց միջեւ:



Հարուստ մարդուն փողոցի դրան առջեւ աղքատ,
հիւանդ սոված մուրացկան մը կը նստէր: Անոր
անունը Ղազարոս էր:





Խեղճ Ղազարոսի մարմինը
վերքերով լեցուն էր: Ան
հիւանդութիւն ուներ: Ան
վերքեր եւ սպիւնքու ուռեցքներ
ուներ, որ ստացած էր չար
մարդոցմէ: Կրնար հիւանդ

ըլլալ, որովհետեւ
լաւ ճաշ, կաթ,
բանջարեղէն
եւ միս չուներ
սնանելու:



Ղազարոս ճաշ
կ'աղաչէր: Ան
ուրախ կ'ըլլար
նոյնիսկ եթէ
մնացորդը
ուտէր այդ
հարուստ
մարդուն
ճաշին:



Փողոցին շուները
երբեմն կը լիզեն
անոր վերքերը,
այդ խեղճ
յանձնուած
մուրացկանին:
Կարծես
մէկու մը
հոգը չէր, որ
Ղազարոսը
սոսի մէջ էր:



Առաւօտ մը
Ղազարոս
չ'արթնցաւ:
Այս խեղճ
սոված եւ
անընկեր
մուրացկանը
լքեց այս
կեանքը:
Ղազարոս
մեռած էր:



Ղազարոսի համար
ուրախութիւն էր այդ
վայրկեանը, որ ան մեռաւ: Յիսուս ըսաւ,
որ հրեշտակները զինք գրկեցին, որպէսզի
ըլլայ Աբրահամի հետ: Ղազարոս Աստուծով
հանգիստ գտաւ:



Հարուստ մարդն ալ մեռաւ: Ամբողջ իր դրամը չէր
կրցած իր կեանքը փրկել, երբ մահը եկաւ որեւէ
մէկը չկրցաւ կեցնել զայն:



Հարուստ մարդը թաղուեցաւ: Թերեւս մեծ
թաղումով: Թերեւս մարդիկ կը գովեն հարուստ
մարդուն, որ խոհեմ եւ յաջող էր: Սակայն անոնց
գովասանքները չօգնեցին անոր, հարուստ
մարդը, դժոխքի մեջ էր:



Դժոխքին մեջ հարուստ մարդը կը պռռար.

"Չայր Աբրահամ, Ղազարոսը դրկէ, որպէսզի իր
մատը դպցնէ ջուրին եւ քիչ մը պաղեցնէ լեզուս,
որովհետեւ շատ կը
չարչարուիմ այս
բոցերուն մեջ":



"Կեանքի մէջ ունեիր ամեն
ինչ եւ Ղազարոսը ոչինչ".
Աբրահամը յիշեցուց
հարուստ մարդուն:
"Յիմա Ղազարոսը
հանգիստ պիտի ընէ եւ
դուն տառապիս: Որեւէ
մէկը չի կրնար դիմացի
հակառակ հսկայ ծոցը
կտրել, որ մեր եւ քու մէջ է":



Աբրահամը




"Ղազարոսը դրկե, որ զգուշացնէ
իմ հինգ եղբայրներուն աղաչեց
հարուստ մարդը: Չեմ ուզեր,
որ ինձի պէս հոս տառապին

եւ սարսափելի
վերջ ունենան":




"Քու եղբայրների ունին Աստուծոյ
խօսքը", ըսաւ Աբրահամ, "եթէ
հինգ եղբայրների չեն հաւատար
Սուրբ գործին, ապա չեն հաւատար

եթէ նոյնիսկ
Ղազարոս
ես գայ
մեռելներէն":



Երբ Յիսուս վերջացուց պատմութիւնը այս
հարուստ մարդուն եւ Ղազարոսին, թերեւս
տաճարին առաջնորդները իրենք իրենց
հարց տուին. "Արդեօ՞ք ես կը սիրեմ
երկրաւոր հարստութիւնները
աւելի քան զԱստուծ": Հիմա անոնք
գիտէին, թէ ինչ կը պատահի անոր
եղեր Աստուծոյ
խօսքէն
կը շեղի:



Հարուստ մարդ, աղքատ մարդ:


Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Ղուկաս 16

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Մաղմոս 119:130





Կերջ

44

60



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի ղրկեց, որպէսզի էաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

